

H.G. PETROSYAN

**ADJECTIVAL PHRASEOLOGICAL UNITS WITH THE COMPONENTS
NAMING NATURE PHENOMENA AND OBJECTS IN ARMENIAN,
RUSSIAN AND ENGLISH**

Grammatical peculiarities of adjectival phraseological units with the components naming nature phenomena and objects in Armenian, Russian and English have been considered. Similarities and differences of their application in the sentence have been introduced.

Keywords: phraseological unit, law/rule, morphology, syntax, structural type, degrees of comparison.

ՀՏԴ 811.111-26

Ջ.Լ. ԲԱՐՍԵՂՅԱՆ

**ԱՆԳԼԵՐԵՆԻ ԴԱՍԵՐԻՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ
ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ**

Ներկայացվել են անգլերենի ուսուցման մեթոդաբանական որոշ խնդիրներ, ինչպես նաև՝ դասավանդման ժամանակակից մեթոդների կիրառման անհրաժեշտությունը՝ որպես ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացման միջոց: Մեթոդների բազմազանությունը հնարավորություն է տալիս դասավանդողին հեշտորեն մատուցել նյութը:

Առանցքային բառեր. ուսուցման փոխներգործուն մեթոդներ, ուսանողակենտրոն ուսուցում, սովորողներ, դասավանդողներ, ուսումնական գործընթաց:

Ուսուցման մեթոդներն այսօր պայմանականորեն երկու խումբ են կազմում՝ ավանդական և նոր կամ ժամանակակից: Ավանդական են համարվում բացատրական- զննական այն մեթոդները, որոնց հիմքում ընկած է պատրաստի տեղեկատվության պարզ փոխանցումը սովորողին և վերջինիս կողմից դրա պարզ վերարտադրումը: Ժամանակակից մեթոդների հիմքում ընկած է սովորողի ինքնուրույն ուսումնական գործունեությունը, գիտելիքի ձեռքբերման գործընթացում նրա անմիջական, ակտիվ մասնակցությունը: Խիստ կարևորվում է, որ ուսումնառության ընթացքում բոլոր դասավանդողներն օգնեն սովորողներին, սակայն այդ օգնությունը չպետք է դառնա միանձնյա ղեկավարում կամ սոսկ վերահսկում [1]:

Ուսուցման ընթացքում ակտիվ միջավայր ապահովող մեթոդներն ընդունված է անվանել ինտերակտիվ կամ փոխներգործուն մեթոդներ: Եթե ավանդական մեթոդների դեպքում փոխադարձաբար ակտիվ գործունեության մեջ են գտնվում սովորողը և դասավանդողը, ապա փոխներգործուն մեթոդների դեպ-

քում սովորողները փոխադարձաբար ակտիվ գործունեության մեջ են գտնվում նաև միմյանց հետ, և ուսուցման ընթացքում գերակայում է սովորողների դերը [2]: Ինտերակտիվ դասը փոխներգործություն է ոչ միայն դասավանդողի և սովորողի, այլև հենց իրենց՝ սովորողների միջև:

Բազմազան ու տարաբնույթ են օտար լեզվի դասավանդման մեթոդները (քերականական-թարգմանական, լեզվի իրավիճակային ուսուցման կամ բանավոր մեթոդ, ուղիղ մեթոդ և այլն), սակայն մեր առաջարկած մեթոդիկան հիմնվում է հաղորդակցական մոտեցման վրա, ինչը ենթադրում է փոխներգործուն մեթոդների առատ գործածություն դասապրոցեսում:

Անգլերենի դասավանդման բնագավառում փոխներգործուն մեթոդների կիրառումը հնարավորություն է տալիս ներգրավել սովորողներին ուսումնական գործունեությանը, ապահովում է գիտելիքի ձեռքբերման գործընթացում նրանց անմիջական, ակտիվ մասնակցությունը, նպաստում սովորողների հետաքրքրության աճին, ստեղծագործական մտածողության և մտքերն ազատ արտահայտելու հմտության զարգացմանը և այլն:

Սակայն մեթոդ ընտրելիս պետք է նախապես մտածել՝ արդյոք համապատասխանում է դասանյութին և արդյունավետ է տվյալ թեման յուրացնելու համար, թե ոչ: Տեխնիկական բուհում «Անգլերեն» առարկայի դասաժամերին կարելի է կիրառել այնպիսի մեթոդներ, որոնք առավելագույն արդյունք կարող են տալ տվյալ թեմայի շրջանակներում և կընդունվեն նաև սովորողների կողմից: Հասկանալի է, սակայն, որ նույն մեթոդի բազմակի կիրառումը կարող է ծանծրույթ և անհետաքրքրություն առաջացնել սովորողների շրջանում: Ուստի դասի ընթացքում սովորողների ուշադրությունը պահելու համար անհրաժեշտ է ակտիվ և հետաքրքիր դասաժամի կազմակերպում: Օրինակ՝ սովորողների հետազոտական, ստեղծագործական ակտիվության, տրամաբանական-ճանաչողական մտածողության զարգացման համար կիրառելի է **նախագծերի մեթոդը**: Որպես օրինակ կարող է ծառայել ՀԱՊՀ-ի բակալավրական 1-ին կուրսի ուսանողների համար նախատեսված "English in Practice" դասագրքի Great Britain թեման: Այն ուսումնասիրելիս կարելի է սովորողներին հանձնարարել զուգահեռներ անցկացնել Մեծ Բրիտանիայի և Հայաստանի միջև, ապա իրականացնել ստեղծագործական-հետազոտական նախագիծ՝ նվիրված Հայաստանին: Նպատակը՝ ստեղծել ուսումնական փաթեթ՝ «Ճանաչեք հին ու նոր Հայաստանը» վերնագրով: Ընթացքը՝ նյութերի ձեռքբերում, համակարգում՝ Հայաստանի մայրաքաղաքները, վարչական բաժանումը, տոները, հուշարձանները և այլն:

Շփման պահանջմունքի իրականացման համար նպատակահարմար է կիրառել **բանավեճի մեթոդը**: Աշխատանքում կարևորը շփվելու, բանավեճ վարելու ունակությունն է: Օրինակ՝ որպես բանավեճի թեմա կարելի է ընտրել

հետևյալ հարցադրումը՝ **‘Will writing by hand become the thing of past?’** Այսպիսի բանավեճերում սովորողը ներգրավվում է ակտիվ ճանաչողական գործունեության մեջ, սովորում է մասնակցել բանավեճին, պաշտպանում իր կարծիքը, լսում այլոց տեսակետները: Գտնում ենք, որ ոչ մասնագիտական ուսումնական հաստատություններում օտար լեզվի դասերին շատ կարևոր է սովորողներին հաղորդակցության տարբեր ձևեր սովորեցնելը: Խմբային ուսուցման մեթոդի կիրառումը շատ արդյունավետ է տվյալ խնդիրն իրականացնելիս: Այստեղ յուրաքանչյուրն աշխատում է յուրաքանչյուրի հետ, և ստացվում է՝ երկուստեք աշխատում են փոխադարձաբար միմյանց համար: Խմբային քննարկման ընթացքում ուսումնառողները յուրացնում են բանավեճի, շփման և համագործակցության մշակույթը, ինչպես նաև տեղի է ունենում գիտելիքների, գաղափարների փոխանակում:

«Անգլերեն» դասընթացի տարբեր դասերին այդ մեթոդներով և հնարներով դասավանդելիս դասապրոցեսը պետք է բաժանել երեք փուլի՝ **խթանման, իմաստի ընկալման և կշռադատման /Evocation – Realization – Reflection (ERR)/**: ԽԻԿ համակարգի յուրաքանչյուր փուլ ունի իր նպատակներն ու մեթոդական հնարները: Խթանման փուլի հիմնական առանձնահատկությունն է բացահայտել նոր նյութի վերաբերյալ սովորողների գիտելիքներն ու պատկերացումները: Հետևաբար, այս փուլում մեթոդական «զինանոցը» պետք է ներառի այնպիսի հնարներ ու տեխնոլոգիաներ, որոնք կակտիվացնեն սովորողների նախնական գիտելիքները ուսումնական թեմայի վերաբերյալ: Այսպիսի մեթոդական հնարներից առանձնանում են **«Պրիզմա», «Մտագրոհ», ԳՈՒՍ աղյուսակի 1–ին և 2–րդ սյունակները**: Քննարկենք յուրաքանչյուր հնար առանձին–առանձին:

«Պրիզմա»: «Պրիզմա» մեթոդական հնարը կիրառվում է դասի սկզբնական՝ խթանման փուլում՝ ակտիվացնելով սովորողների ունեցած գիտելիքներն ու պատկերացումները: Մեթոդական հնարն արդյունավետ է այն դեպքերում, երբ պահանջվում են կարճ, համառոտ բառերի, հատկանիշների, ցուցանիշների թվարկումներ: «Պրիզմա» հնարի կիրառումը քննարկենք **Egyptian Pyramids** դասի օրինակով: Դասի սկզբում ուսումնական նյութի վրա սովորողների ուշադրության կենտրոնացումն ապահովելու համար դասավանդողը գրատախտակին կազմված պրիզմայի սկզբում գրում է դասի հիմնական բովանդակությանը վերաբերող սկզբնաբառը՝ **Egyptian Pyramids** և վերջում՝ վերջնաբառը, օրինակ՝ **Advanced Civilization**. Այնուհետև սովորողներին հանձնարարվում է լրացնել այն համապատասխան գաղափարներով՝ բխեցնելով դրանք սկզբնաբառից:

«Մտագրոհ»: Դասի խթանման փուլում հաճախ կիրառվող հնարներից է **«Մտագրոհը»**: Մտագրոհի միջոցով դասավանդողը լսարանից հավաքագրում է

մտքեր տվյալ թեմայի վերաբերյալ: Կարևոր է, որ սովորողները, առանց երկար մտածելու, պատասխանեն դասավանդողի հարցին, որպեսզի դասավանդողի համար պարզ դառնան նաև այն սխալ պատկերացումները, որոնք թեմայի վերաբերյալ ունեն սովորողները: Յուրաքանչյուր մասնակից ազատ և անկաշկանդ արտահայտում է իր իմացածը, չի անհանգստանում սխալվելուց: Այսպիսի անկաշկանդ մթնոլորտի ստեղծումը նպաստում է ստեղծագործական մտածողության զարգացմանը:

Կարծում ենք՝ այս հնարի ճիշտ և տեղին օգտագործումը կնպաստի սովորողների կողմից դասերի յուրացման արդյունավետության բարձրացմանը:

ԳՈՒՍ աղյուսակ: ԳՈՒՍ աղյուսակը ստեղծվել է Դոննա Օգլի (Donna Ogle) կողմից 1986 թվականին: Այն կարող է օգտագործվել ցանկացած առարկայի ուսուցման ժամանակ: Դասասկզբում դասավանդողը գծում է երեք սյունակից բաղկացած աղյուսակ, որի ծախ սյունակում գրում է **Գ**-ինչ գիտեմ արդեն, կենտրոնում՝ **ՈՒ**-ինչ եմ ուզում իմանալ, աջ սյունակում՝ **Ս**-ինչ եմ սովորել: Դասի թեման հայտնելուց հետո դասավանդողը սովորողներին դիմում է հետևյալ հարցով՝ What do you know about this topic? (Ինչ գիտեք այս թեմայի մասին): Ապա լրացնում է *գիտեմ* սյունակը: Հաջորդիվ սովորողներին հարցնում է՝ What do you want to know about this topic? (Ինչ եք ուզում իմանալ այս թեմայի մասին): Եվ լրացնում է *ուզում եմ իմանալ* սյունակը: Դասի վերջում լրացվում է *սովորեցի* աղյուսակը [3]:

Իմաստի ընկալում: Իմաստի ընկալման փուլի հիմնական նպատակներն են նոր և հին տեղեկությունների շաղկապումը և իմացության նոր կառույցի ստեղծումը: Քննարկենք այն մեթոդական հնարները, որոնք հարմար են՝ կիրառելու անգլերենի դասի իմաստի ընկալման փուլում:

Փոխգործուն գրառումների համակարգ՝ արդյունավետ կարդալու և մտածելու մեթոդ (ՓԳՀԱԿՄՀ)»: Սա իմաստի ընկալման փուլի արդյունավետ մեթոդական հնար է, որն օգնում է սովորողին տեքստը կարդալու ընթացքում վերահսկել սեփական ընկալումը: Այս հնարի էությունն այն է, որ կարդալիս արվում են փոխգործուն գրառումներ՝ հետևյալ նշաններով (V) գիտեմ, (-) հակասում է իմ պատկերացումներին, (+) նոր տեղեկություն է, (?) անհասկանալի է, (!) հետաքրքիր է: Այնուհետև սովորողներին հանձնարարվում է ընթերցել դասը՝ օգտվելով փոխգործուն նշաններից: Սույն մեթոդական հնարով կարելի է անցկացնել **The Mystery of the Bermuda Triangle** դասը: Սովորողը կարդալու ընթացքում լուսանցքում տեղադրում է այս նշանները: Կարիք չկա բոլոր տողերում նշաններ անել: Ընթերցումից ստացած տեղեկությունը դասակարգելու համար սովորողները կազմում են նշումների իրենց անհատական աղյուսակը:

Այնուհետև լսարանը բաժանվում է 3-հոգանոց խմբերի, և յուրաքանչյուր խմբում քննարկվում են նախ՝ «Ինձ համար անհասկանալի է» նշանի տակ առանձնացված տեղեկույթը, որից հետո դասավանդողն ամփոփում է նյութը: Ամփոփումը կատարվում է առանձին ուսանողներին ուղղված հարցադրումներով, օրինակ՝ *What happens to ships and planes in the Bermuda Triangle? What explanations can you give to this mystery?* և այլն: Որոշ սովորողներ էլ կարող են պատմել դասը:

«Վենի դիագրամը»: Վենի դիագրամը կառուցվում է երկու շրջանագծերով, որոնք հատման մակերես ունեն կենտրոնում: Այս դիագրամը կարելի է օգտագործել գաղափարները միմյանց հակադրելու կամ դրանց ընդհանրությունը ցույց տալու նպատակով: Օրինակ՝ դասախոսը ցանկանում է, որ սովորողները ածական և մակբայ թեմաները ուսումնասիրելուց հետո գտնեն նրանց ընդհանրությունները և տարբերությունները: Դասախոսը խնդրում է սովորողների զույգերին գծել Վենի դիագրամ, մի շրջանագծում բնութագրել մի խոսքի մասի, մյուս շրջանագծում՝ մյուսի առանձնահատկությունները, ինչպես նաև՝ կենտրոնում գրել երկու խոսքի մասերի ընդհանրությունները: Օրինակ՝ «ածական» շրջանագծում սովորողը լրացնում է՝

1. Ածականը ցույց է տալիս առարկայի հատկանիշ: Ածականները լինում են որակական և հարաբերական: Նախադասության մեջ լինում է որոշիչ, ստորոգելիական վերադիր:

2. «Մակբայ» շրջանագծում լրացնում է՝ 1. Գործողության տեղ, ժամանակ, ձև, չափ և քանակ ցույց տվող բառերը կոչվում են մակբայ: Նախադասության մեջ լինում է պարագա: Մի քանի մակբայներ ունեն երկու ձև, որոնցից մեկը չի տարբերվում նույնարմատ ածականի ձևից, մյուսը վերջանում է –ly ածանցով: Այս երկու ձևերը մեծ մասամբ ունեն տարբեր իմաստներ՝ *near* (մոտ), *nearly* (մոտավորապես), *late* (ուշ), *lately* (վերջերս) և այլն: Մի խումբ մակբայներ՝ *fast*, *long*, *far*, *low*, *early*, ձևով չեն տարբերվում նույնարմատ ածականներից: Այդպիսի մակբայները կարելի է տարբերել՝ նկատի ունենալով նախադասության մեջ նրանց պաշտոնը, օրինակ՝ *a low voice* (ածական), *to fly low* (մակբայ):

Շրջանագծի հատման մակերեսում սովորողը լրացնում է երկու խոսքի մասերի ընդհանրությունները: Օրինակ՝ 1. և՛ ածականը, և՛ մակբայը փոխվում են ըստ համեմատության աստիճանի, որոնք երկուսն են՝ բաղդատական և գերադրական: 2. Ըստ կազմության երկուսն էլ լինում են պարզ, ածանցավոր և բարդ:

«Խճանկար»: Սա հնար է, որի դեպքում սովորողները խորամուխ են լինում ուսումնական նյութի որոշակի հատվածի, որոշակի ասպեկտի մեջ և դրանք

ուսուցանում միմյանց: Օրինակ՝ անգլերենի քերականության «**Հոդ**» (**The Article**) թեման, որը բավականին ծավալուն և ժամանակատար է, կարելի է անցկացնել «խճանկար» հնարով:

Խթանման փուլից հետո դասավանդողը ուսանողներին բաժանում է 4-հոգանոց խմբերի: Խմբերից յուրաքանչյուրում անդամները ստանում են համարներ՝ 1–4: Խմբերի 1 համարները հավաքվում են մեկ սեղանի շուրջ, 2–ները՝ այլ, 3–ները, 4–երը՝ առանձին սեղանների շուրջ: Դրանք կոչվում են փորձագիտական խմբեր:

ա) Դասավանդողը հանձնարարում է, որ 1–ին խմբի բոլոր անդամները ինքնուրույն սովորեն և համատեղ քննարկեն «Հոդ» թեմայի «Անորոշ հոդ» (*The Indefinite Article*) հատվածը, 2–րդ խմբի անդամները՝ «Որոշյալ հոդ» (*The Definite Article*) հատվածը, 3–րդ խումբը՝ «Հոդի բացակայություն կամ զրո հոդ», 4–րդը՝ «Կայուն արտահայտությունները, որոնցում օգտագործվում են անորոշ և որոշյալ հոդերը» հատվածները:

բ) Սովորողները վերադառնում են իրենց հիմնական խմբերը, և նրանցից յուրաքանչյուրը խմբի մյուս անդամներին սովորեցնում է դասի իր կողմից յուրացված հատվածը: Արդյունքում միմյանց օգնությամբ խմբի բոլոր անդամները սովորում են դասը: Եթե հիմնական խմբում կլինեն հարցեր, որոնց փորձագետը չի կարողանա պատասխանել, ապա դրանց պատասխանները ձևակերպվում են դասավանդողի կողմից:

«Ապագայի անիվ»: Այս հնարը կարելի է կիրառել տարբեր թեմաներում դիտարկվող երևույթների պատճառահետևանքային կապերի բացատրության ժամանակ: Տվյալ հնարով կարելի է ուսումնասիրել **Our Planet Earth** դասը: Դասավանդողը գրատախտակի մեջտեղում գրում է, օրինակ, բնապահպանական մի քանի խնդիրներ (*global warming, acid rains, air and water pollution, overpopulation*), ապա սովորողներին հանձնարարում է մտազրոհով թվել այդ հիմնախնդրի հետևանքները և գրել նրա վերին մասում՝ տրված բառից բխեցնելով: Դրանք էլ իրենց հերթին կարող են բաղդատվել: Իսկ բառի ստորին մասում գրում են հիմնախնդրի պատճառները: Ամփոփելով կարելի է հանձնարարել սովորողներին գրել հակիրճ գրավոր աշխատանք երկիր մոլորակի բնապահպանական որևէ հիմնախնդրի վերաբերյալ: Այս հնարը շատ արդյունավետ է այնպիսի թեմաներ ուսումնասիրելիս, որտեղ առկա են խնդիրները և դրանցից բխող հետևանքները, պատճառները:

Կշռադատման փուլ: **Կշռադատման փուլի** նպատակներից է այն, որ սովորողները նոր ստացած տեղեկությունը կարողանան արտահայտել իրենց բառերով և ձևակերպումներով: Այս փուլում կիրառվող մեթոդական հնարներից են հետևյալները:

Քառաբաժան կամ Ֆրայերի մոդել: Դասի կշռադատման փուլում կիրառվող մեթոդական հնար է: Դասավանդողը գրատախտակը բաժանում է չորս հավասար մասերի (աղ.): Յուրաքանչյուր մասում առաջարկում է գրել որոշակի հարց և պատասխանել, օրինակ՝ **ALFRED NOBEL- A MAN OF MANY CONTRASTS** տեքստը ընթերցելուց հետո դասավանդողը կարող է առաջարկել հետևյալ քառաբաժանը:

Աղյուսակ

<p>Բնութագրող Բնութագրի՝ ր Ա. Նոբելին:</p>	<p>Զգացմունքներ արտահայտող Ի՞նչ զգացմունքներ ունեցաք տեքստը ընթերցելուց հետո:</p>
<p>Կենսավործ Տեքստի բովանդակությունը ի՞նչ հիշեցրեց ձեզ:</p>	<p>Իմաստավորում Տեքստին նոր վերնագիր դրե՛ք:</p>

Այնուհետև ուսումնառողները բաժանվում են 3–4 հոգանոց խմբերի: Խմբերը պատասխանում են հարցերին, ապա յուրաքանչյուր խումբ ներկայացնում է իր պատասխանները:

Թեմաները յուրացնելուց հետո արդյունավետ է նաև շարադրանքի կիրառությունը, հատկապես երբ զուգակցվում է «**կարուսեթ**» հնարին: Օրինակ՝ հանձնարարվում է գրել շարադրանք **Healthy Lifestyle** թեմայով՝ օգտագործելով ներկա ապառնի ժամանակաձևը և be going to կառույցը: Շարադրանքը գրում են լուռ: Մի խումբ գրում է մեկ նախադասություն, փոխանցում մյուս խմբին: Այն խումբը, որը չի կարողանում շարունակել, գիծ է դնում և փոխանցում: Ժամանակը լրանալուն պես կարդում են շարադրանքը:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ վերջին տարիներին դանդաղ, բայց հաստատուն քայլերով ուսուցման գործընթաց են թափանցում փոխներգործուն մեթոդները: Այսօր բազմաթիվ ուսումնական հաստատություններում կիրառվում է փոխներգործուն մեթոդների մեծ համախումբ, որն ապահովում է ուսուցման և ուսումնառության ուսանողակենտրոն մոտեցում, համաձայն որի՝ յուրաքանչյուր սովորող պետք է դառնա դասի գործուն մասնակիցը՝ ինքնուրույն անցնելով գիտելիքների ձեռքբերման ճանապարհը: Այս համատեքստում դասավանդողի արդյունավետ աշխատանքի նախապայմաններից մեկը ուսուցման բազմազան միջոցներին տիրապետելն է: Այս իմաստով ուսուցման նոր մեթոդների ու եղանակների իմացությունը շատ կարևոր է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ուսուցման արդյունավետ հնարներ /Ս. Խաչատրյան և ուրիշներ, Ֆրիդրիխ էբերտ հիմնադրամ.- Երևան, 2020.- 74 էջ:
2. Ամիրջանյան Յու., Սահակյան Ա. Մանկավարժություն: Ուսումնական ձեռնարկ մանկավարժական բուհերի ուսանողների համար. - Երևան: Մանկավարժ հրատ., 2005.- 456 էջ:
3. Սարգսյանյան Ա., Դալլաքյան Ա., Դիշաղաջյան Ն. Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ. -Վանաձոր, 2008.- 101 էջ:

Յ.Լ. ԲԱՐՍԵԳՅԱՆ

ПУТИ ПОВЫШЕНИЯ ПРОДУКТИВНОСТИ ОБУЧЕНИЯ НА УРОКАХ АНГЛИЙСКОГО ЯЗЫКА

Представлены некоторые методические проблемы обучения и необходимость внедрения современных методов преподавания как средство повышения продуктивности процесса обучения. Многообразие методов облегчает задачу преподавателя в процессе презентации материала.

Ключевые слова: интерактивные методы обучения, студентоцентрированное обучение, учащиеся, преподаватели, учебный процесс.

Z.L. BARSEGHYAN

THE WAYS OF INCREASING THE EFFECTIVENESS OF TEACHING IN ENGLISH CLASSES

The article presents some of the methodological problems in teaching English and the necessity of introduction of modern methods of teaching as a means of increasing productivity of the learning process. The diversity of methods makes it easier for the instructor to present the material.

Keywords: interactive methods of teaching, student-centered learning, learner, instructor, educational process.